

Տարի մը եւս բոլորեցինք: Փառք կու տանք Աստուծոյ իր պարգեւներուն համար: Բացի ձմրան խիստ ցուրտ եղանակէն մեր խումբը ամսական հանդիպումներ ունեցաւ ամէն ամիս, երբ մեզ մեր տուններէն առնելով տարին Եկեղեցի, ուր ունեցանք հաճելի ժամանց, դաստիարակիչ յայտագիրներ, աղօթք եւ սիրալիւր ընկերակցութիւն:

Աւուր պատշաճի խորհրդածութիւններ եւ շահեկան գիտելիքներ տրուեցան մեզի Տէր Հօր կողմէ, ինչ որ բոլորս ալ գնահատանքով մտիկ ըրինք եւ օգտուեցանք:

Ամէն հաւաքոյթի առիթով ամէն անգամ մէկ տուար կամ աւելի վճարելով եւ երբեմն ալ ուրիշ դրամական նուէրներ ընելով մեր գանձը պարարտացած է բաւական: Մեր խումբի կազմուելէն ի վեր այս լուծումներով գոյացած մեր գանձին մէջ ունինք ներկայիս մօտաւորապէս 2,000 տուար, որ կը ծրագրենք նուիրել նոր եկեղեցիին, մեր խումբին անունով յիշատակի նուէր մը ունենալու նպատակաւ եւ մեր համեստ մասնակցութիւնը բերելու մեր նոր աղօթատունի հաստատման մէջ:

Մեր շնորհակալութիւնը կը յայտնենք մեր Հովիւին, ինչպէս նաեւ այն ազնիւ տիկիներուն, որոնք մեզի կ'օգնեն հիւրասիրութեամբ, փոխադրութեամբ եւ բարի տրամադրութեամբ: Անահիտ Զուխաշեան, Օժիկ Թումա եւ Նոյեմ Փօլատեան:

Աղաւնի Սահակեան  
Ատենապետուհի

Սրբուհի Թորոսեան  
Ատենաղալրուհի

Մինա Մանուկեան  
Գանձապահուհի

AVAKS — SENIORS

Since the inception of our group, we have had the good fortune of meeting monthly at the Church, except in inclement weather. At our gatherings we have shared bread and good fellowship, plus educational programs and prayers, led by our Pastor.

At each gathering a contribution of one dollar, or more, is made by each member. From the collection of those monies and from sponsoring a few Lenten dinners, we have now in our Treasury close to \$2,000. We plan to donate this sum to our new church, where we hope to have a memorial in the name of our group.

We thank Der Hayr, and the ladies who have helped us as our hostesses and who have given us rides - Anahid Chookachian, Ojig Tooma and Noem Poulatian.